## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

16 սեպտեմբերի 2019թ. թիվ 1364

### Ա. ՌԵՎԱԶՅԱՆԻՆ, Ա.ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ԵՎ Ա.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ, ՕՁՈՒՆ, ԱՐԴՎԻ, ԴԵԲԵԴ, ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պաշտոնակատարի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Արամ Ռևազյանին, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Արտյոմ Շահվերդյանին և նույն բաժնի առաջատար մասնագետ Արշակ Բաղդասարյանին ս/թ սեպտեմբերի 16-ին մեկ օրով գործուղել Մարգահովիտ, Օձուն, Արդվի, Դեբեդ, Հարթագյուղ և Ստեփանավան համայնքներ՝ «Բերքի տոն-2019» ամենամյա միջոցառման անցկացման տեղի ընտրության հարցով:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 16
ք.Վանաձոր